

4557

ԸՆԴՀԱՆՈՒՐ


ԿԱՆՈՆԱԳԻՐ

Տ Պ Բ Ք

Հայ Մարտնչարձական

ՄԻՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈՂԻՆ



ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Մամուկ Յ. Գօշումեան

1912

796
S-89

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

S O R F

ՀԱՅ ՄԱՐՄԱՐԱՐՁԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ



Կ. ՊՈԼԻՏՈ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿ Յ. ԳՈԶՈՒՆԵԱՆ

Մեծ-Հռոց Խան, թիւ 45


1912

38501 w. h.

Հայոց ուժանք

Հայոց ուժանք

Դիմու, Արև Տղ



(5059-47)

21833-60



ԸՆԴԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

S O R F

ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿ

Յօդ. 1.— **S O R F** Հայ Մարմնամարզական Միութիւնը կազմուած է
1908 Սեպտ. 20 ին, հայ երիտասարդներէ,
նողատակ ունենալով ամէն կերպով աշխատիլ
երիտասարդութեան ֆիզիքական զարգացման :

0-66812

2004

ՄԻԶՈՑՆԵՐ

2.— Միութիւնը իր նպատակին իրագործման համար՝

Ա. Կը մշակէ մամսաւորապէս ֆութ-պօլը . նաև Մարմնամարզը , Աթլէթիզմը ու Սփոռները :

Բ. Կը հաստատէ Մարմնամարզարան մը :

Գ. Կը հիմնէ Մատենադարան մը մարմնամարզական , առողջապահական , բնախօսական և այլ գիրքերու և հանդէմներու յատուկ :

Դ. Կը սարքէ բանախօսութիւններ իր անդամներուն և հասարակութեան ծանօթացնելու համար առողջապահական , մարմնամարզական և այլ սկզբունքներ ու ծանօթութիւններ :

Ե. Կը կազմակերպէ դաշտային հանդէմներ ուր կը կատարուին մարմնամարզի և սփորի մրցումներ Միութեան անդամներու կողմէ :

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

3.— Ամէն հայ անհատ , առանց սեռի և դաւանանքի խտրութեան կրնայ անդամակցիլ Տորք Հայ Մարմնամարզական Միութեան :

4.— Միութեան անդամները երկուքի կը բաժնուին . Պատուոյ անդամ և Գործօն անդամ , Պատուոյ անդամ են անոնք՝ որ Միութեանս նպա-

տակին համակիր լինելով ու և է կերպով կ'օժանա-
դակեն կամ օժանդակած են անոր. իսկ Գործօն
անդամ են անոնք՝ որ կանոնաւորապէս կը հետեւ-
լին Միութեան ընդունած մարմնամարդական ու
է մէկ ճիւղին :

5.— Միութեանս անդամակցելու համար
պէտք է գրաւոր առաջարկ ներկայացնել Վարչա-
կան Ժողովին որ քննելով դիմողին գլխաւորաբար
բարոյականը, և ուրիշ պարագաները, կ'ընդունի
կամ կը մերժէ առաջարկը :

6.— Միութեանս անդամավճարն է ամսա-
կան առնուազն Զ դահեկան և մուտքի նուէր մը՝
կամաւոր :

ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐՆ

ՈՒ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

7.— Ամէն գործօն անդամ Բնդհ. Ժողովնե-
րու մէջ ձայնի, վարչական կազմերու մասնակցե-
լու և Միութեանս բոլոր ձեռնարկներէն օգտուելու-
իրաւունք ունի :

8.— Պատույ անդամներն ալ գործօն անդամ-
ներու նման կ'օգտուին Միութեանս ձեռնարկնե-
րէն, կրնան Բնդհ. Ժողովներու ներկայ գանուիլ,

վիճաբանութեանց մասնակցիլ , մասնախուժքերու անդամակցիլ , սակայն գործօն անդամներու նման քուէի իրաւունք չունին , ինչպէս նաև Ընդհ . Ժողովի Դիւանի և Վարչ . Ժողովի անդամ ընտրուելու :

9.— Բոլոր անդամները իրաւունք ունին իրենց դիասովութիւնները և առաջարկները գրաւոր կերպով ներկայացնել Վարչ . Ժողովին :

10.— Ու և է անդամ Միութենէս զատ ուրիշ մարմնամարզական ակումբի չի կրնար մասնակցիլ :

11.— Ամէն անդամ պարտաւոր է ունենալ Միութեանս պաշտօնական համազգեսար և հետեւած ձիւղերուն բոլոր պիտոյքը :

12.— Ամէն անդամ պարտաւոր է իր մասնակցած ձիւղերուն փորձերուն և մրցումներուն կանոնաւորաբար ներկայ գտնուիլ . բանաւոր պատճառաւ բացակայութիւնները միայն ներելի են :

13.— Ամէն անդամ պարտաւոր է կանոնաւորաբար վճարել իր ամսավճարը : Վարչութիւնը կրնայ առանց բանաւոր պատճառնին յայտնելու երեք ամիս յաջորդաբար ամսական չվճարող անդամները հրաժարեցնել :

14.— Անդամներու պարտականութիւններուն գործադրութեան համար Վարչ . Ժողովը ,

Նկատի առնելով անդամի մը պայմանները, կրնայ բացառիկ կարգադրութիւններ ընել անոր մասին:

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

15.— Միութիւնս ունի երկու ժողով . Բնդ հանուր և Վարչական :

ԸՆԴՀԱՌԱՆՈԽ ԺՈՂՈՎ.

16.— Բնդ . Ժողովը կը կազմուի Միութեանը բոլոր գործօն անդամներէն :

17.— Բնդ . Ժողովը սովորաբար կը գումարուի տարին մէկ անդամ , Յուլիսին և օրինաւոր կը նկատուի գործօն անդամներու պարզ մեծամասնութեան ներկայութեամբ :

18.— Բնդ . Ժողովը կրնայ բացառիկ նիստեր ունենալ , եթէ Վարչ . Ժողովը հարկ տեսնէ և կամ գործօն անդամներուն $\frac{1}{4}$ ը գրաւորապէս պահանջէ :

19.— Բնդ . Ժողովի համար Վարչութիւնը մասնաւոր հրաւէր կ'ուղղէ բոլոր անդամներուն գումարման թուէն առնուազն հինգ օր տուած , հրաւէրին կցելով նաև ժողովի օրակարգը :

20.— Եթէ Բնդ . Ժողովի առաջին հրաւէրին $\frac{1}{2}$ չգոյանայ , երկրորդ հրաւէրին գործօն ան-

դամներու 1/3 ը անհրաժեշտ է ժողովի օրինաւորութեան համար :

21.— Բնդհ. Ժողովի պաշտօնն է. քննել նախորդ Վարչ. Ժողովի գրամական հաշիւները և վարչ. գործունէութիւնը, ընտրել նոր Վարչ. Ժողովը, կանոնագիրը բարեփոխել և Վարչ. Ժողովի կողմէ պատրաստուած օրակարգի միւս խնդիրները կարգադրել :

22.— Բնդհ. Ժողովը իր մէջէն կ'ընտրէ Դիւանը, մէկ Ատենապետ և մէկ Ատենադպիր, պայմանաւոր երկուքն ալ Վարչ. Ժողովի անդամներէն չըլլան :

23.— Ատենապետը սովորաբար մէկ քուէի, իսկ քուէներու հաւասարութեան ատեն որոշիչ ձայն ունի:

24.— Բնդհ. Ժողովի ատենագրութիւնները պէտք է արձանագրուին և ստորագրուին Դիւանին կողմէ :

25.— Բնդհ. Ժողովի կարելի է օրակարգէն դուրս եղող խնդիրներ ալ ներկայացուիլ անդամներու կողմէ և եթէ ներկաներու 1/2 է մէկ աւելին համամիտ գտնուի, խնդիրը կ'անցնի օրակարգ :

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

26.— Վարչ. Ժողովը կը բաղկանայ 5 ան-

դամներէ , որոնք կ'ընարուին Բնդհ . Ժողովէն ,
գաղանի քուէարկութեամբ , և իր պարտականու-
թիւնն է Միութեանս գործերը վարել ևսոյն ու ներ-
քին կանոնագիրներու ձատդրիտ դործադրութիւնը :

27.— Վարչ . Ժողովի պաշտօնավարութեան
շրջանն է 1 տարի , Յուլիաէ-Յուլիս , վերընարելի
ըլլալու պայմանաւ : Եթէ Ժողովը իր շրջանը չը-
րացուցած քաշուի , Բնդհ . Ժողովը շրջանը ամբող-
ջացնելու համար կ'ընարէ նոր Վարչ . Ժողով մը :

28.— Վարչ . Ժողովը կը գումարուի շաբա-
թը երկու անգամ , յարմար դատած ատեն կրնայ
գումարումները աւելցնել :

29.— Վարչ . Ժողովի նիստերը դռնբաց են ,
ուակայն յարմար դատուած ատեն կրնան դռնփակ
աւ ըլլալ :

30.— Վարչ . Ժողովի նիստերը անդամներու
մեծամասնութեան ներկայութեամբ օրինաւոր կը
նկատուին :

31.— Վարչ . Ժողովը կրնայ ի հարկին առ-
ժամեայ կամ մնայուն մասնախումբեր ընարել Մի-
ութեանս գործօն և պատուոյ անդամներէն՝ որոնց
կրնայ ընկերացնել նաև ոչ-անդամներ՝ անոնց
յանձնելով ու է խնդիր կամ ձեռնարկ : Մասնա-
խումբերը պատասխանատու են Վարչութեան :

32.— Կանոնագրէ դուրս ծագած խնդիրնե-

բու մասին Վարչ . Ժողովը կրնայ , և պարտաւոր է ,
որոշում մը տալ , իսկ իր ձեռնհասութենէն վեր
նկատած խնդիրները կը ներկայացնէ Բնդհ . Ժողո-
վին :

33.— Վարչ . Ժողովի անդամները իրենց
ամեռղջ գործառնութեանց համար իւրաքանչիւրը
անհատապէս պատասխանատու է Վարչ . Ժողովին ,
իսկ Վարչութիւնը պատասխանատու է Բնդհ . Ժո-
ղովին :

34.— Վարչ . Ժողովը իր մէջէն կ'ընտրէ .

1 Ատենապետ 1 Քարտուղար

1 Գանձապահ 1 Գոյքապահ :

35.— Վարչ . Ժողովի Ատենապետի պարտա-
կանութիւնն է նախագահել Վարչ . Ժողովի նիս-
տերուն , հսկել ժողովի տուած որոշումներուն
ձատգրիտ գործադրութեան և Միութեանս ներքին
կարգապահութեան :

36.— Ատենապետը առ հասարակ մէկ ձայնի
իրաւունք ունի , իսկ քուէից հաւասարութեան ա-
տեն որոշիչ ձայն ունի :

37.— Քարտուղարի պաշտօնն է վարել Մի-
ութեանս ատենական և յարաբերական գործերը :

38.— Գանձապահի պաշտօնն է վարել Մի-
ութեանս գրամական գործերը :

39.— Գոյքապահի պարտականութիւնն է Միութեանս գոյքերը մասնաւոր տեսրի մը միջ արձանագրել, պահել և խնամել զանոնք:

ԵԼԵՒՄՈՒՏՔ

40.— Միութեանս հասոյթի միջոցներն ընդհանրապէս կը կազմեն, անդամավճարներ, նուերներ, համոզանակութիւններ են. Վարչ. Ժողովը կրնայ հասոյթի ուրիշ միջոցներու ալ դիմել:

41.— Հասոյթներու, $\frac{1}{0}$ ԶՕ ը անձեռնորդիւնի պահեստի դրամի յատկացուելով, մեացեալը կրրնայ ծախսուիլ միմիայն Միութեանս պէտքերուն:

42.— Բոլոր ընտրութիւնները և քուեարկութիւնները կը կատարուին գտղանի, և օրինաւոր են մասնակցող ձայներու պարզ մեծամասնութեամբ. յարմար դատուած ատեն ձեռամբարձ ես կրնան ըլլալ:

ԶԱՆԱԶԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

43.— Միութիւնս ունի **4** տեսրակ

1. Էնդհ. և Վարչ. Ժողովներու Ատենագրութեանց տեսր:

2. Հաշուետեսր, ուր մանրամասնօրէն կ'արձանագրուի Միութեանս ելեմուաքը:

3. Էնդօրինակութեան տեսր մը:

4. Տետրակ մը ուր կ'արձանագրուին իւրաքանչիւր անդամի անունը , մականունը , բնակավայրը , տարիքը , զբաղումը , մտած օրուան թուականը , և լի :

44.— Միութիւնս իրր կարգապահական միջոց ունի՝

1. Ազգարարութիւն Վարչ . Ժողովի որոշմամբ
և Առենապետի միջոցաւ ,

2. Ազգարարութիւն Վարչ . Ժողովի ներկայութեան ,

3. Առժամեայ դադարում ,

4. Վերջնական հեռացում :

45.— Վարչ . Ժողովը կը կազմակերպէ տարեկան երեք մրցանանդէս Միութեանս անդամներուն միջև : Սոյն մրցումներէն գլխաւորը տեղի կ'ունենայ Ապրիլին և շահողներու մրցանակներ կը տրուին . իսկ միւս երկու մրցանանդէմներուն մէջ յաջող հանդիսացողները կ'ստանան ժապաւէնէ մըրցանակներ :

46.— Միութեանս կառավարութեան հետոնեցած յարաբերութիւնները կը կառարուին Քարտուղարին միջոցաւ :

47.— Միութեանս կնիքը կը մնայ Քարտուղարին քով :

48.— Միութիւնս պէտք է ունենայ իրեն անհրաժեշտ եղած գեղերը , որոնք կը յանձնուին

Վարչ . Ժողովի կողմէ յարմար դատուած անդամի
մը պահպանութեան :

49.— Միութեանս նպատակը անփափոխ ըլ-
լալով , ներկայ կանոնագիրը կրնայ բարեփոխուիլ
Ընդհանուր Ժողովի ներկայ անդամներու^{2/3}ի քուեով :

ՅԱԻԵԼՈՒԱԾ

50.— Միութեանս Կեղրոնը միշտ Գում-Գա-
բու մնալով , Պոլսոյ և այլ քաղաքներու մէջ կրնայ ու-
նենալ Մասնաձիւղեր , որոնք պարտաւոր են ընդունիլ
Միութեանս Ընդհ . կանոնագիրը :

51.— Մասնաձիւղերը ամէն իրաւասութիւն
ունին իրենց վարչային բոլոր խնդիրներու կարգա-
գրման մէջ , միայն հնթակայ են Կեղրոնի Վարչու-
թեան քօնթրոլին :

52.— Մասնաձիւղերը իրենք կը անօրինեն
իրենց հաշուական բոլոր գործերը , միայն ամսա-
կան հասոյթին ^{0/0} ին ԶՕը կը դրկեն Կեղրոն :

53.— Վարչ . Ժողովը իրաւասութիւն ունի
Մասնաձիւղերու հետ որոշ կարգադրութիւններ ը-
նել , դուրս չելելով վերոյիշեալ յօդուածներուն
արամադրութիւններէն . նոյնպէս Վարչ . Ժողովը
կրնայ , յարմար դատած առեն , քօնդրոլի հնթարկել

Մասնաճիւղերու դրամական և բարոյական գործունէութիւնը :

54.— Կեդրոնի վարչութիւնը իրաւասութիւնունի կազմել կամ լուծել ու է Մասնաճիւղ :





0023587

